# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԿԴՄՀՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/29 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **02.06.2026թ.**

21.05.2026-02.06.2026թթ. ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ **վերակառուցման (էլեկտրամատակարարման ցանցի վերակառուցման և հիմնանորոգման) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների** ձեռքբերման ԿԴՄՀՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/29 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Կ. Սերոբյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գլխավոր էներգետիկ՝ նախագահ, |
| Ս. Գասպարյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի էլեկտրամեխանիկ, էլեկտրամանտյոր՝ անդամ, |
| Է. Ղուկասյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի անվտանգության և ՏՏ վարչության ղեկավար՝ անդամ, |
| Ա. Նալբանդյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետ՝ անդամ, |
| Լ. Տանդիլյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ՝ անդամ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կ. Սերոբյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ն. Բոյաջյանը՝ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գնումների համակարգող՝ քարտուղարը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ.-ի մայիսի 21-ին, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի շենքում ժամը 15:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | վերակառուցման (էլեկտրամատակարարման ցանցի վերակառուցման և հիմնանորոգման) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 7704550 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 04229504, հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14, հեռ.՝ +374 43 60 00 90, էլ. հասցե՝ gritig@inbox.ru |
| 2 | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 09218126, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զաքարիա Քանաքեռցու փող. 50շ., հեռ.՝ +374 94 322 432, էլ. հասցե՝ info@grandinspection.am |

| | | |
|---|---|---|
| 3 | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01362589, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ, Մաշտոցի պող. /Շ/ 60 գրասենյակ 6, հեռ.՝ +374 93 741188, էլ. հասցե՝ ascontrol.llc@gmail.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ նախատեսված ոչ գնային պայմանների սահմանող բոլոր չափանիշները և պահանջված փաստաթղթերը առկա են բայց կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան.

**«ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ**-ն սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացրած փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

Կազմակերպության կողմից ներկայացրած պայմանագրերի շինարարության շինթույլտվությունները ներկայացրած չէ:

**«Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ**-ն սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացրած փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

Կազմակերպության կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով սահմանված ծառայության մատուցման համար պահանջվող լիցենզիաների (ներդիրների) վերաբերյալ տեղեկատվությունը:

Կազմակերպության կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.1-ով աշխատակազմում ներգրավված մասնագետի՝ Խաչիկ Խարատրյանի որակավորումը հավաստող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող հավաստագրի պատճենը.

Կազմակերպության կողմից ներկայացված Դիմում-հայտարարությունում (Հավելված 1) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացված է 2025 թվականի տվյալներով:

Կազմակերպության կողմից ներկայացրած պայմանագրերի շինարարության շինթույլտվությունները ներկայացրած չէ:

**«Գրիտիգ» ՍՊԸ**-ն սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացրած փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

Հավելված 1.1, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի (մասնագետների) հաստատած գրավոր համաձայնությունները /ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը տվյալ չափաբաժնին/՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող հավաստագրի պատճենները.

Հրավերով սահմանաված ծառայության մատուցման համար պահանջվող լիցենզիաների (ներդիրների) վերաբերյալ տեղեկատվությունը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | վերակառուցման (էլեկտրամատակարարման ցանցի վերակառուցման և հիմնանորոգման) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | 7704550 | 5000000 | 0 | 5000000 |
| | | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ | | 3390000 | 0 | 3390000 |
| | | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | | 5393000 | 0 | 5393000 |

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների ոչ գնային պայմանների չափանիշները:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. 27.05.2026թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ին, «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ-ին և «Գրիտիգ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. սահմանված ժամկետներում «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի, «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ-ի և «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը.
2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | բավարար |
| | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ | բավարար |
| | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | բավարար |

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

Մասնակիցների հայտերը գնահատվում են հետևյալ կարգով՝

ա. նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ֆինանսական առաջարկը գնահատվում է հարյուր միավոր, իսկ մյուս մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

ԳՄ= ՆԳ X 100/ԳԳ,

որտեղ՝

ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,

ՆԳ-ն նվազագույն գինն է,

ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է,

բ. բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՄԳ = (ԳՄ X 0.3) + (ՏԱ X 0.7),

որտեղ՝
ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,
ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,
ՏԱ-ն մասնակցի տեխնիկական առաջարկին տրված միավորն է. ՏԱ=ՏԱ1+ՏԱ2

| Գնահատման չափանիշը | Մասնակիցների անվանումները | | |
|---|---|---|---|
| | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ |
| **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ = ՏԱ 1 + ՏԱ 2)**<br><br>**/Մասնագիտական փորձառություն (ՏԱ1) և Աշխատանքային ռեսուրսներ (ՏԱ2)** | 40 | 50 | 50 |
| **Գնային առաջարկ (ԳԱ)** | 68 | 100 | 63 |
| **Ընդամենը** | 48 | 65 | 54 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.
1. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է “X” |
|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | |
| 1 | 3 | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | |
| | 1 | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ | X |
| | 2 | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների ոչ գնային պայմանների չափանիշների նկատմամբ բավարար գնահատված հայտեր

ներկայացրած մասնակիցների թվից,որպես ամենաբարձր գնահատական ստացած մասնակից:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ն. Բոյաջյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվանից չորրորդ աշխատանքային օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և

որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Կ. Սերոբյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ս. Գասպարյան ______________

Է. Ղուկասյան ______________

Ա. Նալբանդյան ______________

Լ. Տանդիլյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ն. Բոյաջյան ______________